Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից
համակարգիչների և տպիչ սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/6 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19 | 03 հունվարի 2022թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Պարսիկյան, Ա.Լալայան, Գ.Խաչիկյան, Ա.Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Թադևոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)***
1	Սեղանի համակարգիչներ	4200000
2	Համակարգչային մոնիտոր	540000
3	Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային տպիչ	750000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 29.12.2021 թ.-ին ժամը 12:00-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 30.12.2021 թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	էլ. հասցեն
1	«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ	ք"Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ 2բ շենք 45բն	091 40 36 47	sale@comp.am
2	«ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ	ք.Երևան, Տիգրան Մեծ 29ա բն37	098 40 05 59	karen0markosyan@gmail.com
3	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	ք.Երևան, Վարդանանց 18/2	095 51 99 17	KarenSukiasyan@patron.am

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/6 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չ/Հ	Չբ. տեղ	Մասնակիցներ	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Նախահաշիվ ՀՀ դրամ	Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին		
1	1	«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ	3495000	20%	4194000	3495000	20%	4194000	420000	
2	1	«ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ	427500	20%	513000	427500	20%	513000	540000	
	2	«ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ	450000	20%	540000	450000	20%	540000		
3		«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	649000	20%	778800	636600	20%	763920	750000	մերժված

Աճուրդն ամփոփվել է 30.12.2021թ-ին և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել 1-ին չափաբաժնով «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնով «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի և «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

7.1 «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագում՝ /Հավելված 1.2/ առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 1"3 Հայտարարագրի ներկայացումը ենթաբաժնի 1.3.1 կետի ստորագրման ամսաթիվը չի համապատասխանում 1"3.3 կետի ամսաթվի հետ, ուստի այն ենթակա է շտկման: 4.5՝ ա. կետի նշումը բացակայում է:
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Տեխնիկական բնութագիրը» սյունակում .... կոշտ սկավառակը նշված է Samsung 980 NVMe 500գբ «կամ համարժեք», որն ունի տարակերպ մեկնաբանություն, անհրաժեշտ է հստակ ներկայացնել առաջարկվող կոշտ սկավառակը: «Արտադրողի անվանումը» սյունակում արտադրող կազմակերպության կազմակերպաիրավական ձևը ենթակա է շտկման, անհրաժեշտ է հստակ նշել արտադրող ընկերության կազմակերպաիրավական ձևը: Ապրանքային նշան սյունակը ենթակա է շտկման:

7.2 «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագում՝ /Հավելված 1.2/ առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 3.3 Անձի հաշվառման հասցեն ենթաբաժնի 3.3.2 և 3.3.3 կետերը ենթակա են շտկման (անհրաժեշտ է Համայնքը նշել Երևան, իսկ Վարչատարածքային միավորը՝ ըստ Վարչական շրջանի): 3.4 Անձի բնակության հասցեն ենթաբաժնի 3.4.2 և 3.4.3 կետերը ենթակա են շտկման (անհրաժեշտ է Համայնքը նշել Երևան, իսկ Վարչատարածքային միավորը՝ ըստ Վարչական շրջանի): 3.11 Անձի հաշվառման հասցեն ենթաբաժնի 3.11.2 և 3.11.3 կետերը ենթակա են շտկման (անհրաժեշտ է Համայնքը նշել ք.Աշտարակ, իսկ Վարչատարածքային միավորը՝ Արագածոտնի մարզ): 3.12 Անձի բնակության հասցեն ենթաբաժնի 3.12.2 և 3.12.3 կետերը ենթակա են շտկման (անհրաժեշտ է Համայնքը նշել Երևան, իսկ Վարչատարածքային միավորը՝ ըստ Վարչական շրջանի): Հավելված 1.2-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Տեխնիկական բնութագիրը» սյունակում .... գունային խտությունը հստակ չէ: «Առաքման վայրը՝ ք. Երևան, Բաղրամյան 19» նախադասության վերջում լրացված են ավելորդ բառեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/6 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 03.01.2022թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ին և «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 05.01.2022թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. 05.01.2022թ. ժամը 12:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 05.01.2022թ. ժամը 12:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ն և «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/6 ծածկագրով գնման ընթացակարգի՝ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

05.01.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ին և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով «ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-ին ՝ հայտարարել որպես ընտրված մասնակիցներ:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10"4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Տիգրան Պարսիլյան

_____ Անժելա Լալայան

_____ Գառնիկ Խաչիկյան

_____ Արմենակ Մանուկյան

քարտուղար՝ _____ Հեղինե Թադևոսյան